ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆԻՉ ՊԱԼԱՏ

ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵՐԵՔ ԱՄԻՍՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՔՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2021

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

1. Ներածական մաս - էջ 2
2. Հապավումներ - էջ 4
3. Ամփոփագիր - էջ 5
4. Հաշվեքննության հիմնական արդյունքներ - էջ 9
5. Հաշվեքննության օբյեկտի ֆինանսական ցուցանիշներ - էջ 10
6. Անհամապատասխանությունների վերաբերյալ գրառումներ - էջ 12
7. Հաշվեքննությամբ արձանագրված այլ փաստեր - էջ 13
8. Հետհսկողական գործընթաց - էջ 16
9. Առաջարկություններ - էջ 17

1. Ն Ե Ր Ա Ծ Ա Կ Ա Ն Մ Ա Ս

Հաշվեքննության հիմքը	ՀՀ հաշվեքննիչ պալատի 2021 թվականի մայիսի 11-ի թիվ 129-Ա որոշում:
Հաշվեքննության օբյեկտը	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության Գիտության պետական կոմիտե:
Հաշվեքննության առարկան	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության Գիտության պետական կոմիտեի 2021 թվականի պետական բյուջեի երեք ամիսների մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն:
Հաշվեքննության առարկայի չափանիշները	«ՀՀ աշխատանքային օրենսգիրք», «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենք, «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, «Գնումների մասին» ՀՀ օրենք, «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենք, «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենք, ՀՀ կառավարության 2020թ. դեկտեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» թիվ 2215-Ն որոշում, ՀՀ կառավարության 2001թ. նոյեմբերի 17-ի թիվ 1121 որոշում, ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011թ. փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշման ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 526-Ն որոշում, ՀՀ կրթության և գիտության նախարարի, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության Գիտության պետական կոմիտեի նախագահի հրամաններ:
Հաշվեքննությունն ընդգրկող	2021 թվականի հունվարի 1-ից մինչև 2021 թվականի մարտի 31-ը ներառյալ:

Ժամանակաշրջանը

Հաշվեքննության կատարման ժամկետը	2021 թվականի մայիսի 19-ից մինչև 2021 թվականի հուլիսի 31-ը:
Հաշվեքննության մեթոդաբանությունը	Հաշվեքննությունն իրականացվել է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի և ՀՀ հաշվեքննիչ պալատի 2020թ հուլիսի 30-ի թիվ 132 –Լ որոշմամբ հաստատված «ՀՀ պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման հաշվեքննության ուղեցույց»-ի համաձայն: Իրականացվել է ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն, որի ընթացքում կիրառվել են հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ, վերահաշվարկ և վերակատարում ընթացակարգերը:
Հաշվեքննությունն իրականացրած կառուցվածքային ստորաբաժանում	Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի չորրորդ վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ Դավիթ Չիբուխչյանը:

2. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

1. **Նախարարություն** – Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության:

2. **Կոմիտե** – Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության Գիտության պետական կոմիտե:

3. **Ծրագիր 1** – (1162-11002) «Գիտական ենթակառուցվածքի պահպանում և զարգացում» ծրագիր:

4. **Ծրագիր 2** – (1162-11004) «Ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանություն» ծրագիր:

4. **Ծրագիր 3** – (1162 - 11005) «Գիտական և գիտատեխնիկական պայմանագրային (թեմատիկ) հետազոտություններ» ծրագիր:

5. **Ծրագիր 4** – (1162-12001) «Գիտաշխատողների գիտական աստիճանների համար տրվող հավելավճարներ» ծրագիր:

6. **ԾՐԱԳՐԵՐ** - Ծրագիր 1-ից Ծրագիր 4-ը ներառյալ:

7. **ԳԱԱ** – Հայաստանի Հանրապետության Գիտությունների Ազգային Ակադեմիա:

8. **ԵՊՀ** – Երևանի պետական համալսարան:

9. **Հոդված 1** – (463700) «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին»:

10. **Հոդված 2** – (463900) «Այլ ընթացիկ դրամաշնորհներ»:

11. **Հոդված 3** – (462100) «Ընթացիկ դրամաշնորհներ միջազգային կազմակերպություններին»:

12. **ԳՄԱ** - Գնումների միասնական անվանացանկ:

3. Ա Մ Փ Ո Փ Ա Գ Ի Ր

Կոմիտեի ԾՐԱԳՐԵՐ-ի շրջանակներում 2021թ. երեք ամիսների պլանի և ճշտված պլանի ընդհանուր տարբերությունը կազմել է 100,200.0 հազ. դրամ, որը վերաբերվում է Ծրագիր 1-ին 200.0 հազ. դրամով և Ծրագիր 3-ին 100,000.0 հազ. դրամով: Նախարարության Ծրագիր 1-ում առաջացած տարբերությունը պայմանավորված է տեղի ունեցած վերաբաշխմամբ, որի մասին Կոմիտեն սահմանված կարգով ծանուցել է ՀՀ ֆինանսների նախարարությանը, իսկ Ծրագիր 3-ի տարբերությունը հիմնավորված է ՀՀ կառավարության 2021թ. մարտի 18-ի թիվ 371-Ն որոշմամբ հիշյալ միջոցառման 2021թ. տարեկան պլանից 300,000.0 հազ. դրամ նվազեցմամբ, որից 100,000.0 հազ. դրամը բաժին է ընկել հաշվետու ժամանակաշրջանին:

Կոմիտեի 2021թ. երեք ամիսների ԾՐԱԳՐԵՐ-ում ֆինանսավորումը կազմել է 1,748,089.8 հազ. դրամ, որը ճշտված պլանի (2,097,635.4 հազ. դրամ) նկատմամբ կազմել է 83,3 % կամ թերֆինանսավորումը՝ 349,545.7 հազ. դրամ: Կոմիտեի 2021թ. երեք ամիսների ԾՐԱԳՐԵՐ-ի ճշտված պլանի հանդեպ թերֆինանսավորումները պայմանավորված են մի քանի հանգամանքներով (տես՝ Աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Կոմիտեի ԾՐԱԳՐԵՐ -ի 2021թ. երեք ամիսներ ճշտված պլանի նկատմամբ թերֆինանսավորման պատճառների վերաբերյալ

(հազ. դրամ)

Թիվ	Ծրագ-ներ	2021թ. երեք ամիսներ			Թերֆինանսավորման պատճառներ
		Ճշտված պլան	Ֆինան-սավորում	Թերֆինան-սավորում	
1	*2*	*3*	*4*	*5*	*6*
1	Ծրագիր 1	1,433,327.6	1,239,775.1	193,552.6	Կոմիտեի գիտական և գիտատեխնիկական կազմակերպությունները, ելնելով գործունեության առանձնահատկություններից, 2021թ. տարեկան պլանավորված ծախսերից առաջին եռամսյակի համար նախատեսված որոշակի ծախսեր տեղափոխել են հաջորդ եռամսյակներ՝ պահպանելով շարունակական համամասնությունները:
2	Ծրագիր 2	168,506.5	166,646.7	1,859.8	

3	Ծրագիր 3	390,884.3	274,393.0	116,491.3	Տարբերությունը պայմանավորված է նախատեսված, սակայն դեռևս չկայացած թեմատիկ մրցույթների հաղթողների ֆինանսավորման բացակայությամբ:
1	*2*	*3*	*4*	*5*	*6*
4	Ծրագիր 4	104,917.0	67,275.0	37,642.0	*Ֆինանսավորումը տրվում է կազմակերպությունների կողմից ներկայացվող հայտերի հիման վրա, որոնք ճշտվում են յուրաքանչյուր եռամսյակի կտրվածքով՝ կապված փվյալ կազմակերպություններում թեկնածուների և դոկտորների փաստացի թվի փոփոխությունների հետ:*
Ընդամենը՝		2,097,635.4	1,748,089.8	349,545.7	

Կոմիտեի ԾՐԱԳՐԵՐ-ում 2021թ. երեք ամիսների ճշտված պլանի և դրամարկղային ծախսի (1,734,136.1 հազ. դրամ) միջև առաջացել է 363,499.3 հազ. դրամի տարբերություն, որը ընդհանուր թերֆինանսավորման և 2021թ. երեք ամիսների փաստացի ֆինանսավորման հանդեպ դրամարկղային ծախսի տարբերության՝ 13,953.7 հազ. դրամի (Ծրագիր 1) հանրագումարն է, իսկ մնացորդը պայմանավորված է ԳԱԱ կողմից կազմակերպված սարքավորումների գնման գործընթացով, ինչի ձգձգման արդյունքում հնարավոր չի եղել վճարումն իրականացնել 2021թ. առաջին եռամսյակի ընթացքում, նշված վճարումը տեղափոխվել և իրականացվել է երկրորդ եռամսյակում:

Ըստ ԾՐԱԳՐԵՐ-ի Կոմիտեի հաշվետու ժամանակաշրջանի փաստացի և դրամարկղային ծախսերի միջև առկա է 304,444.6 հազ. դրամի տարբերություն, որը ըստ Ծրագիր 1-ի կազմել է + 339,173.9 հազ. դրամ, ըստ Ծրագիր 2-ի՝ - 4,821.0 հազ. դրամ, ըստ Ծրագիր 3-ի՝ - 34,257.9 հազ. դրամ, իսկ ըստ Ծրագիր 4-ի +4,350.0 հազ. դրամ (տես՝ Աղյուսակ 2):

Աղյուսակ 2

Կոմիտեի ԾՐԱԳՐԵՐ-ում 2021թ. երեք ամիսների դրամարկղային և փաստացի ծախսերի, դեբիտորական և կրեդիտորական պարտքերի փոփոխությունների համամասնությունների տարբերությունների վերաբերյալ

(հազ. դրամ)

Ծրագիր	2021թ. երեք ամիսներ

		Դրամարկղային ծախս	Փաստացի ծախս	Տարբե-րություն (+, -)	Դեբիտորա-կան պարտքերի աճ, նվազում (+, -)	Կրեդիտո-րական պարտքերի աճ, նվազում (+, -)	Բացարձակ շեղում (+, -)	Սյունակ 8 – Սյունակ 7 (+, -)
1	*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*	*8*	*9*
1	Ծրագիր 1	1,225,821.4	1,564,995.3	+ 339,173.9	*(-246,787.2)*	*92,386.7*	- 339,173.9	*0,0*
2	Ծրագիր 2	166,646.7	161,825.3	- 4,821.4	*4,821.4*	*0,0*	+ 4,821.4	*0,0*
3	Ծրագիր 3	274,393.0	240,135.1	- 34,257.9	*35,223.7*	*965.8*	+ 34,257.9	*0,0*
4	Ծրագիր 4	67,275.0	71,625.0	+ 4,350.0	*600.0*	*4,950.0*	- 4,350.0	*0,0*
Ընդամենը՝		1,734,136.1	2,038,580.7	+ 304,444.6	(-206,142.1)	+ 98,302.5	- 304,444.6	*0,0*

Կոմիտեի Ծրագիր 1-ում 2021թ. երեք ամիսների փաստացի ծախսերի՝ 339,173.9 հազ. դրամով դրամարկղային ծախսերի գերազանցումներն ըստ հոդվածների արձանագրվել են.

- Հոդված 1-ում դեբիտորական պարտքերն նվազել են 5,290.7 հազ. դրամով, իսկ կրեդիտորական պարտքերը աճել են 3,350.7 հազ. դրամով, որի արդյունքում փաստացի ծախսերը 8,641.4 հազ. դրամով գերազանցել են դրամարկղային ծախսերին:
- Հոդված 2-ում դեբիտորական պարտքերը նվազել են 241,496.5 հազ. դրամով, իսկ կրեդիտորական պարտքերի աճել են 89,036.0 հազ. դրամով որի արդյունքում փաստացի ծախսերը 330,532.5 հազ. դրամով գերազանցել են դրամարկղային ծախսերին:

Նշված հոդվածներում տարբերությունները (հիմնականում՝ կրեդիտորական պարտքերի աճերը) պայմանավորված է կազմակերպությունների 2021թ. մարտ ամսվա համար հաշվարկված, սակայն ապրիլին վճարված աշխատավարձերի հետ:

Կոմիտեի Ծրագիր 2-ում 2021թ. երեք ամիսների դրամարկղային ծախսերի՝ 4,821.4 հազ. դրամով փաստացի ծախսերի գերազանցումն արձանագրվել է Հոդված 2-ում, որտեղ դեբիտորական պարտքերն աճել են հիշյալ գումարով, իսկ կրեդիտորական պարտքերը զրոյական են:

Կոմիտեի Ծրագիր 3-ում 2021թ. երեք ամիսների դրամարկղային ծախսերի՝ 34,257.9 հազ. դրամով փաստացի ծախսերի գերազանցումներն արձանագրվել են Հոդված 2-ում, որտեղ դեբիտորական պարտքերը նվազել են 35,223.7 հազ. դրամով, իսկ կրեդիտորական պարտքերը աճել են 965.8 հազ. դրամով:

Արդյունքում, Կոմիտեի Ծրագիր 2-ում և Ծրագիր 3-ում չնայած կազմակերպությունները սահմանված ժամանակացույցով ստացել են իրենց հասանելիք ֆինանսավորումը (դրամարկղային ծախս), սակայն պայմանավորված գնումների գործընթացով հաղթող մասնակիցների բացակայության պայմաններում դեռևս պայմանագրեր չեն կնքել, գնումներ չեն կատարել, ինչն էլ իր հերթին բերել է փաստացի ծախսի ցուցանիշի նվազեցման:

Կոմիտեի Ծրագիր 4-ում 2021թ. երեք ամիսների դրամարկղային ծախսերի՝ 4,350.0 հազ. դրամով փաստացի ծախսերի գերազանցումներն արձանագրվել են Հոդված 2-ում, որտեղ դեբիտորական պարտքերը աճել են 600.0 հազ. դրամով, իսկ կրեդիտորական պարտքերը՝ 4,950.0 հազ. դրամով: Նշված հանգամանքով, ինչպես նաև հավելավճարների՝ աշխատավարձերի հետ վճարմամբ պայմանավորված, 2021թ. մարտ ամսվա համար հաշվարկված, սակայն ապրիլին վճարված հավելավճարների գումարներն են տարբերության պատճառը:

4. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Կոմիտեից պահանջվել է ամբողջական տեղեկատվության տրամադրում, որի ուսումնասիրությամբ, ինչպես նաև օգտվելով ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետական վճարահաշվարկային էլեկտրոնային («LSFINANCE» և «LSREP») համակարգերի շտեմարաններից, հասանելի այլ պաշտոնական աղբյուրներից ստացվել է բավարար տեղեկատվություն սույն հաշվեքննությունն իրականացնելու համար:

Հաշվի է առնվել այդ հանգամանքը, ըստ որի 2021թ. երեք ամիսների ՀՀ պետական բյուջեի տարեկան հաշվեքննության իրականացման համար որպես ռիսկային է դիտարկվել նախատեսված ծրագրերի և միջոցառումների մասով հաշվետու ժամանակահատվածի բյուջեի թերակատարումները, բյուջեի կատարողականի վերաբերյալ ՀՀ կառավարություն ներկայացրած հաշվետվություններում բերված ցուցանիշներում փաստացի կատարվածի իրական ծավալները մասնակի ընդգրկելու, իսկ որոշ դեպքերում՝ առհասարակ չներառելու խնդիրները:

Կոմիտեի 2021թ. ՀՀ պետական բյուջեի երեք ամիսների մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեության նկատմամբ իրականացված հաշվեքննության ընթացքում էական խեղաթյուրումներ չեն հայտնաբերվել, իսկ հայտնաբերված անհամապատասխանությունները համատարած չեն ու հաշվեքննության առարկային վերաբերող հաշվետվությունները էականորեն խեղաթյուրված չեն:

5. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Նախարարության Կոմիտեի ԾՐԱԳՐԵՐ-ի շրջանակներում 2021թ. տարեկան ընդհանուր պլանը կազմել է 11,188,608.5 հազ. դրամ, ճշտված տարեկան պլանը 10,586,391.6 հազ. դրամ, տարբերությունը՝ 602,216.9 հազ. դրամը, հիմնավորված է ՀՀ կառավարության որոշումներով 601,416.9 հազ. դրամ նվազեցումներով (Ծրագիր 1-ում 292,117.2 հազ. դրամով, Ծրագիր 2-ում՝ 9,299.7 հազ. դրամով և Ծրագիր 3-ում՝ 300,000.0 հազ. դրամով) և վերադասի կողմից սահմանված կարգով վերաբաշխման միջոցով նվազեցմամբ 800.0 հազ. դրամ (Ծրագիր 1): Նախարարության Կոմիտեի ԾՐԱԳՐԵՐ-ի 2021թ. երեք ամիսների պլանը կազմել է 2,197,835.4 հազ. դրամ, իսկ ճշտված տարեկան պլանը 2,097,635.4 հազ. դրամ, տարբերությունը՝ - 100,200.0 հազ. դրամը, հիմնավորված է ՀՀ կառավարության որոշումներով 100,000.0 հազ. դրամ նվազեցումներով (Ծրագիր 3) և վերադասի կողմից սահմանված կարգով վերաբաշխման միջոցով նվազեցմամբ 200.0 հազ. դրամ (Ծրագիր 1): Նախարարության Կոմիտեի ԾՐԱԳՐԵՐ-ի 2021թ. երեք ամիսների ընդհանուր ֆինանսավորումը կազմել է 1,748,089.8 հազ. դրամ, դրամակղային ծախսը՝ 1,734,136.1 հազ. դրամ, իսկ փաստացի ծախսը՝ 2,038,580.7 հազ. դրամ:

Նախարարության Կոմիտեի և ԾՐԱԳՐԵՐ-ի 2021թ. տարեկան և երեք ամիսների ֆինանսական ամփոփ ցուցանշները տրված են աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3

Նախարարության Կոմիտեի և ԾՐԱԳՐԵՐ-ի 2021 թվականի երեք ամիսների ամփոփ ֆինանսական ցուցանիշներ

(հազ. դրամ)

Ծրագրային բյուջետային ֆինանսավորման անվանումը, *(ծածկագիրը)*	2021թ. տարեկան պլան	Փոփոխություններ տարեկան պլանում		**2021թ. տարեկան**	2021թ. երեք ամիսներ					*Կատարման փոկոսը*	
		ՀՀ կառավ...	Վերադասի	**2021թ. առաջի**	Փոփոխություններ առաջին եռամսյակի պլանում	**2021թ. առաջի ...**	Փաստացի	Դրամարկղային	Փաստացի ծախս	Տարեկան հատված	Հաշվետու ժաման...

						ՀՀ կառավարության կողմից (+, -)	Վերադասի կողմից (+, -)					
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
Կոմիտե *(105015)*	**13,640,062.1**	-554,921.4	--	**13,085,140.7**	**2,723,083.2**	-61,816.4	--	**2,661,267.2**	2,272,192.4	2,220,469.5	2,621,697.0	***17.0***	***83.4***
Ծրագիր 1	**7,367,069.2**	*-292,117.2*	*-800.0*	7,074,152.0	1,433,527.6	--	*-200.0*	1,433,327.6	1,239,775.1	1,225,821.4	1,564,995.3	***17.0***	***85.4***
Ծրագիր 2	**842,532.7**	-9,299.7	--	833,233.0	168,506.5	--	--	168,506.5	166,646.7	166,646.7	161,825.3	***20.0***	***98.9***
Ծրագիր 3	2,454,421.6	-300,000.0	--	2,154,421.6	490,884.3	-100,000.0	--	390,884.3	274,393.0	274,393.0	240,135.1	***12.7***	***70.2***
Ծրագիր 4	524,585.0	--	--	524,585.0	104,917.0	--	--	104,917.0	67,275.0	67,275.0	71,625.0	***12.8***	***64.1***
Ընդամենը՝ ԾՐԱԳՐԵՐ	**11,188,608.5**	-601,416.9	-800.0	**10,586,391.6**	**2,197,835.4**	**-100,000.0**	**-200.0**	**2,097,635.4**	1,748,089.8	1,734,136.1	2,038,580.7	***16.5***	***83,3***

6. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

6.1 Կոմիտեի 2021թ. երեք ամիսների հաշվեքննությամբ պարզվեց, որ 2021թ. գնումների պլանում հաստատված և հրապարակված «Համակարգչային կոնֆիգուրացիաների ընդլայնման ծառայություններ» գնման առարկայի ԳՄԱ ծածկագիրը (72541100) սխալ է լրացվել (50311240), որի արդյունքում պետք է կիրառվեր «Գնանշման հարցում» գնման ընթացակարգ՝ «Մեկ անձից գնում» ընթացակարգի փոխարեն: Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 2017թ. ապրիլի 13-ի «Գնումների պլանի ձևը, դրա լրացման, հաստատման և հրապարակման կարգը հաստատելու մասին» թիվ 390-Ն որոշման հավելված 3-ի 2-րդ բաժնի 2-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետի պահանջների հետ:

Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումը.

«… անհամապատասխանությունը իրականում թյուրիմացության արդյունք է, քանի որ գնման առարկայի ԳՄԱ ծածկագիրը, որը ներկայացվել է պահանջված փաստաթղթերի հետ, երկու գնումների համար սխալմամբ լրացված է եղել միևնույն ծածկագիրը, սակայն ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հրապարակված ՀՀ գիտության կոմիտեի 2021 թվականի գնումների պլանում առկա տեղեկատվությունից հստակ պարզ է դառնում, որ իրականացված երկու գնումները ունեն լրիվ այլ ծածկագրեր, ինչն էլ հիմք է հանդիսանում նշված գնումներն իրականացնելու առանձին՝ «Մեկ անձից գնում» ընթացակարգով:»

Հաշվեքննողների մեկնաբանությունը.

Հաշվեքննության օբյեկտը առարկություններ չի ներկայացրել, տրվել են պարզաբանումներ և բացատրություններ:

7. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՄԲ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՅԼ ՓԱՍՏԵՐ

7.1 Կոմիտեի ԾՐԱԳՐԵՐ-ի 2021թ. երեք ամիսների հաշվեքննությամբ պարզվեց, որ.

7.1.1 Կոմիտեի Ծրագիր 1-ում ոչ ֆինանսական, արդյունքին միտված ցուցանիշների կատարողականների զրոյական մակարդակների կամ էական թերակատարման պայմաններում 2021թ. երեք ամիսների կտրվածքով դրամարկղային ծախսերի հանդեպ փաստացի ծախսերը գերազանցել են 339,173.9 հազ. դրամով:

Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումը.

«… որոշ արդյունքային ցուցանիշների տարեկան կտրվածքով նախատեսվածից պակաս լինելու կամ զրոյական լինելու պայմաններում առկա փաստացի ծախսի գերազանցումը դրամարկղային ծախսին բացատրվում է այն հանգամանքով, որ տվյալ փաստացի ծախսերը գոյացել են ոչ թե պակաս իրականացված կամ չիրականացված արդյունքային ցուցանիշներից, այլ իրականացված ցուցանիշների գծով առաջացած փաստացի ծախսն են՝ պայմանավորված այդ ցուցանիշների շարունակականությամբ:»

7.1.2 Կոմիտեի Ծրագիր 1-ի Հոդված 3-ում 2021թ. երեք ամիսների կտրվածքով անփոփոխ ճշտված պլանի, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի դեբիտորական և կրեդիտորական պարտքերի հաշվառման, դրամարկղային և փաստացի ծախսերի միջև տարբերության բացակայության պայմաններում, առաջացել է 173.9 հազ. դրամի թերֆինանսավորման և 59.4 հազ. դրամի ֆինանսավորման և դրամարկղային ծախսերի տարբերություն:

7.1.3 Կոմիտեի Ծրագիր 1-ի Հոդված 1-ում 2021թ. երեք ամիսների կտրվածքով պլանի և ճշտված պլանի, ֆինանսավորման և դրամարկղային ծախսերի միջև տարբերության, ինչպես նաև տարեսկզբին կրեդիտորական պարտքերի բացակայության պայմաններում, թերֆինանսավորվել է 11,959.5 հազ. դրամ, իսկ

փաստացի ծախսերը 8,641.4 հազ. դրամով գերազանցել են դրամարկղային ծախսերին:

7.1.4 Կոմիտեի Ծրագիր 1-ի Հոդված 2-ում 2021թ. երեք ամիսների կտրվածքով 181,413.8 հազ. դրամ թերֆինանսավորման, ֆինանսավորման և դրամարկղային ծախսի միջև առաջացած 13,894.3 հազ. դրամ տարբերության պայմաններում 2021թ. առաջին եռամսյակի արդյունքներով փաստացի ծախսերը 330,532.5 հազ. դրամով գերազանցել են դրամարկղային ծախսերին:

Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումը.

«… թերֆինանսավորման պատճառը պայմանավորված է կազմակերպությունների կողմից ներկայացված ֆինանսավորման հայտերի նախատեսվածից քիչ ծավալով:»

7.1.5 Համաձայն ՀՀ Ֆինանսների նախարարության շտեմարաններում առկա տեղեկատվության Կոմիտեի Ծրագիր 2-ի 2021թ. երեք ամիսների ոչ ֆինանսական, արդյունքին միտված չափորոշիչների «Ընտրված կազմակերպությունների թիվ» բաղադրիչով ցուցանիշի գծով տարեկան նախատեսված թվով 5 կազմակերպություններից հաշվետու ժամանակաշրջանի նախատեսված և փաստացի քանակը կազմել է թվով 4-ը:

Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումը.

«… տվյալ ծրագրով հաստատված 5 կազմակերպություններից մեկը՝ ԵՊՀ-ն, վերոնշյալ ծրագրի ֆինանսավորման համար առաջին եռամսյակի ընթացքում ֆինանսավորման հայտ չի ներկայացրել:»

7.1.6 Կոմիտեի Ծրագիր 2-ում հաշվետու ժանանակաշրջանի չփոփոխված ճշտված պլանի, 1,859.8 հազ. դրամ թերֆինանսավորման պայմաններում դրամակղային ծախսը 4,821.4 հազ. դրամով գերազանցել է փաստացի ծախսին:

Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումը.

«… փաստացի ծախսի գերազանցումը դրամարկղային ծախսին կապված չէ թերֆինանսավորման հետ, այն պայմանավորված է նշված ժամանակահատվածում իրականացված ֆինանսավորումներից առաջացած տարբերություններով, ինչն էլ բացատրվում է ծրագրերի տարեկան կտրվածքով շարունակականությամբ:»

7.1.6 Կոմիտեի Ծրագիր 4-ում 2021թ. Երեք ամիսների 37,642.0 հազ. դրամի թերֆինանսավորման, ինչպես նաև կազմակերպությունների կողմից թեմաներում ընդգրկված հավելավճարներ ստացող գիտաշխատողների փաստացի թվաքանակով պայմանավորված տնտեսված 51,550.0 հազ. դրամի պայմաններում, դրամարկղային ծախսերի հանդեպ փաստացի ծախսերը գերազանցել են 4,350.0 հազ. դրամով:

Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումը.

«... փաստացի ծախսի գերազանցումը դրամարկղային ծախսին կապված չէ թերֆինանսավորման հետ, այն պայմանավորված է նշված ժամանակահատվածում իրականացված ֆինանսավորումներից առաջացած տարբերություններով, ինչն էլ բացատրվում է ծրագրերի տարեկան կտրվածքով շարունակականությամբ: Թերֆինանսավորումը պայմանավորված է սահմանված կարգի պահանջներին համապատասխան կազմակերպությունների կողմից ներկայացված գիտական աստիճան ունեցող աշխատակիցների տեղեկատվության հիման վրա կատարվող ֆինանսավորումը:

Հաշվեքննողների մեկնաբանությունը.

Հաշվեքննության օբյեկտը առարկություններ չի ներկայացրել, տրվել են պարզաբանումներ և բացատրություններ:

8. ՀԵՏՀՍԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ, ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԱՅԼ ԳՐԱՎՈՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՁԵՎԱՉԱՓ

Թիվ	Առաջարկություններ	Ընդունելի է/ Ընդունելի չէ	Կատարված է/ Ընթացքում է	Հիմնավորումներ
	Անհամապատասխանությունների և այլ գրավոր տեղեկատվության վերացման առաջարկությունների վերաբերյալ			
1	Քայլեր ձեռնարկել գիտական ամսագրերի և մենագրությունների հրատարակման նախատեսված միջոցների ճշգրիտ, նպատակային և ամբողջական օգտագործման համար:	«Ընդունված է»	«Ընթացքում է»	*ԳԱԱ-ի, իր ենթակա կազմակերպությունների կողմից իրականացվող միջոցառումների դեպքում ֆինանսավորումն իրականացվում է ուղղակի, գանձապետական համակարգի միջոցով, Կոմիտեն ֆինանսավորման գործում որևէ դերակատարում չունի:*
2	Քայլեր ձեռնարկել Ծրագիր 1-ի բոլոր կատարողների նկատմամբ Կոմիտեի կողմից որևէ հսկողական կամ կազմակերպչական գործառույթ նախատեսելու ուղղությամբ, հակառակ դեպքում տվյալ ծրագրով տրամադրվող ֆինանսավորումը կարող է դարձնել ինքնանպատակ:	«Ընդունված է»	«Ընթացքում է»	*2020 թ. մարտ ամսից սկսեղծված համաճարակային իրավիճակի և հայտարարված արտակարգ դրության հետ էականորեն սահմանափակվել է մարդկանց տեղաշարժը, և հնարավոր բոլոր դեպքերում աշխատանքներն իրականացվել են հեռավար կարգով, ինչն էլ իր հերթին նպաստել է որոշ ենթածրագրերի գծով աշխատանքների ոչ լրիվ ծավալով կատարմանը: Կոմիտեն եռամսյակային կտրվածքով չի կարող իրականացնել կազմակերպությունների կողմից առաջացրած դեբիտորական և կրեդիտորական պարտքերի վերահսկում:*
3	Առաջարկել Կոմիտեին ձեռնարկել այնպիսի միջոցներ և հսկողական համակարգեր, որոնցով կվերահսկվեն կնքված պայմանագրերով սահմանված կատարողականների և ներկայացվող հայտերի չափաքանակները՝ թերֆինանսավորման պատճառների բացահայտման համար:	«Ընդունված է»	«Ընթացքում է»	
4	Առաջարկել Կոմիտեին ձեռնարկել այնպիսի միջոցներ, որոնցով կբացառվեն «Գնումների մասին» ՀՀ օրենքի (16.12.2016թ.) և ՀՀ կառավարության 04.05.2017թ. «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշման ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 526-Ն որոշման պայմանների և պահանջների չկատարումը:	«Ընդունված է»	«Ընթացքում է»	*Կոմիտեի նախագահի հրամանով սահմանվել են պատասխանատու սպորաբաժանումներ, տրվել են կատարվող հսկողական գործառույթների նկարագրությունը և կատարման վերջնաժամկետները՝ գործող իրավակարգավորումների շրջանակներում ավելի բարձր վերահսկողություն իրականացնելու նպատակով:*

2021թ. երեք ամիսների հաշվեքննության ընթացքում արձանագրված թվով 12 անհամապատասխանություններից և այլ փաստերից Կոմիտեն ըստ էության առարկություններ չի ներկայացրել, թվով 7-ի վերաբերյալ հաշվեքննության օբյեկտի արձագանքը բացակայում է, իսկ թվով 5-ի մասով առկա են պարզաբանումներ և բացատրություններ (Կոմիտեի 2021թ. հուլիսի 20-ի թիվ 08-01/20 գրությունը կցվում է):

9. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Առաջարկվում է Կոմիտեին.

9.1 Ներդնել վերահսկողական այնպիսի գործիքակազմեր, որոնց կիրառմամբ կվերահսկվեն գիտական և գիտատեխնիկական կազմակերպությունների կողմից ներկայացված եռամսյակային ոչ ֆինանսական արդյունքին միտված չափորոշիչների զրոյական մակարդակներն ու էական թերակատարումները: Վերահսկողական ընթացակարգեր սահմանել, որպեսզի դրանց հետևանքներով ձևավորված տնտեսումների, ցածր կամ զրոյական կատարողականները ազդեցություն չունենան Կոմիտեի ԾՐԱԳՐԵՐ-ի բյուջետային հատկացումների, ֆինանսավորումների, դրամարկղային և փաստացի ծախսերի տարբերությունների վրա:

9.2 Ուսումնասիրել, վերլուծել և մոնիթորինգի ենթարկել գիտական և գիտատեխնիկական կազմակերպությունների կողմից ֆինանսավորման հայտերի ներկայացման եռամսյակային պարբերական և համամասնական գործընթացները՝ անկած վերջիններիս տարեկան գործունեության առանձնահատկություններով պայմանավորված պլանավորման, ֆինանսական միջոցների հայտավորման և ծախսերի կատարման շարունակական մեխանիզմների կիրառման:

9.3 Ստեղծել վերահսկողական այնպիսի մեխանիզմներ, որոնց կիրառմամբ Կոմիտեի գնումների ամբողջական գործառույթները կհամապատասխանեն «Գնումների մասին» ՀՀ օրենքի և գնման ոլորտը կարգավորող այլ գործող իրավակարգավորումների պահանջներին:

9.4 Ընթացիկ եզրակացությունում ներկայացված վերոնշյալ առաջարկությունների հիման վրա մշակել և հաստատել միջոցառումների ծրագիր, որը կպարունակի յուրաքանչյուր միջոցառման համար պատասխանատու ստորաբաժանումներ և միջոցառման կատարման ժամանակացույց:

ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ Դ. Չիբուխչյան